



# ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԱՏ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

Հոգեգալուստ  
8 ՅՈՒՆԻՍ 2025

|                          |      |
|--------------------------|------|
| Կիրակնօրեայ Ընթերցումներ | Էջ 1 |
| Ծանուցումներ             | Էջ 2 |

## ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԷՆ (2.1-21)

Երբ Պենտեկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները միասնաբար մէկտեղուած էին: Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք հրեղէն լեզուներ տեսան, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Այն օրը Երուսաղէմ քաղաքը լեցուն էր բարեպաշտ հրեաներով, որոնք աշխարհի չորս կողմերէն եկած էին: Երբ այս ձայնը լսուեցաւ, մեծ բազմութիւն մը եկաւ խռնուեցաւ այնտեղ եւ բոլորը անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին թէ ի՞նչպէս անոնք իրենցմէ իւրաքանչիւրին լեզուով կը խօսէին: Ամէնքն ալ սքանչացումով

եւ զարմանքով կ'ըսէին իրարու. «Այս խօսողները բոլորն ալ Գալիլիացիներ չե՞ն միթէ. ի՞նչպէս կ'ըլլայ որ մեր ծննդավայր երկիրներու լեզուներով կը խօսին, ինչպէս ահաւասիկ կը լսենք: Չէ՞ որ ահա մեր մէջ կան պարթեւներ, մարեր, ելամացիներ, միջագետացիներ, հրեաներ, կապադովկիացիներ, պոնտացիներ, ասիացիներ, փռիւզիացիներ եւ պամփիլիացիներ, եգիպտացիներ, Կիւրենիայի շրջանէն լիպիացիներ, Հռոմէն եկած հրեայ եւ հրէութեան դարձած այցելուներ, կրեւացիներ եւ արաբիացիներ: Եւ ահա բոլորս ալ մեր լեզուներով իրենցմէ կը լսենք Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին»: Ապշահար, անոնք զարմանքով կը հարցընէին իրարու. «Ի՞նչպէս կարելի է բացատրել ասիկա»: Իսկ ոմանք կատակելով կ'ըսէին. «Նոր գինիով գինովցած են»:

Այն ատեն Պետրոս տասնըմէկ առաքեալներուն հետ ոտքի ելաւ եւ բարձրաձայն սկսաւ անոնց խօսիլ. –

«Ո՛վ հրէաստանցիներ եւ դուք որ հիմա Երուսաղէմ կը գտնուիք. իրականութիւնը գիտնալու համար լսեցէ՛ք ինչ որ պիտի ըսեմ: Դուք կը կարծէք թէ ասոնք գինով են. բայց այդպէս չէ, որովհետեւ առտուան ժամը

ինն է զեռ: Մինչդեռ ասիկա կատարումն է Յովէլի մարգարէութեան որ կ'ըսէ.

“Այնուհետեւ երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղամու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի ունենան եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ.

Այն օրերուն իմ Հոգիս պիտի թափեմ նաեւ իմ ծառաներուն եւ աղախիններուն վրայ, եւ անոնք եւս իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի:

Երկինքի բարձունքին վրայ հրաշքներ պիտի ցուցնեմ, եւ նշաններ՝ վարը երկրի վրայ. աշխարհ արիւնով, կրակով ու թանձր ծուխով պիտի լեցուի, արեւը պիտի խաւարի եւ լուսինը արիւնի գոյն պիտի առնէ, եւ ի վերջոյ պիտի հասնի Տիրոջ մեծ եւ ահեղ օրը: Այն ատեն ով որ Տէրը օգնութեան կանչէ՝ պիտի փրկուի”»:

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (14.25-31)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
«Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի զրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն

կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ “Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի”: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինծի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն»:

Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է:

### ՀԻՄՆԱԴԱՆԵՐՈՒՄ ԱԾԵԼՈՒԹԻՒՄ

Բարեհաճեցէք հեռաձայնել  
Արժ. Տ. Գառնիկ  
Աւ. Քհնյ. Գոյունեանի.  
514 909 5203 թիւին:

Սոյն թերթիւն ե-նամակով

ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍԾԷՆ

ՈՒՂԱՐԿԵԾԷՔ

eglise@sourphagop.net